ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մ. Թ. ՀԱԿՈԲՅԱՆ

Տնտեսական շրջանների առանձնացման ժամանակ կարևոր դեր են խաղում հատկապես խոշոր և միջին մեծության քաղաքները։ Ներհանրապետական տնտեսական շրջանների համար, որոնք աչքի են ընկնում փոքր չափերով և տնտեսության ավելի նեղ մասնագիտացմամբ, մեծ նշանակություն ունեն տնտեսական կենտրոնների առկայությունը և դրանց ձևավորումն ու զարգացումը։ Այդպիսիք են խոշոր և միջին մեծության քաղաքները, որոնք աչքի են ընկնում արդյունաբերության ու տրանսպորտի զարգացմամբ, առևտրա-բաշխողական ցանցով, կուլտուր-կենցաղային ձեռնարկություններով ու այլ հաստատություններով։ Քաղաքների տնտեսական շրջան կազմավորող դերը ցցուն կերպով երևում է քաղաքային բնակավայրերի շրջանային համակարգերն ուսումնասիրելիս։ Քաղաքները շրջանային այդ համակարգերի սահմաններում պետք է դիտել իբրև կետեր, որտեղ հանգուցվում են զանազան տարածքների սոցիալ-տնտեսական կապերը։

Սովետական անտեսա-աշխարհագրական գրականության մեջ կան քաղաքների (խոշոր, միջին, փոքր) շրջան կազմավորելու դերի վերաբերյալ զանազան տեսակետներ։ Ն. Բարանսկու կարծիքով՝ «քաղաքները գյուղատնտեսության հետ անմիջական կապ չունեցող բնակչության կուտակման կենտրոններ են, որ աճել են ի հաշիվ ոչ գյուղատնտեսական ճյուղերի՝ արդյունաբերության (ներառյալ արհեստը), առևտրի, տրանսպորտի, գյուղական զանգվածների բաժանման հաշվին, ինչպես նաև ոչ տնտեսական՝ վարչական, ռազմական, մշակութային (այդ հասկացությունների ամենալայն իմաստով) դերի հաշվին։ Շատ դեպքերում, հատկապես սահմանային գոտիներում, քաղաքները ծագել են սկզբնապես որպես ամրացված տեղեր, ամրոցներ»[1]։ Ն. Բարանսկին գտնում է, որ «քաղաքը հանդիսանում է այդ շրջանի ձգողության կենտրոնը, նրա դերը ամենից առաջ և ամենից հաճախ առևտրական և արդյունաբերական է, ապա նաև վարչական ու մշակութային»[2]։

Քաղաքը համանման ձևով է բնութագրել նաև Բ. Խորևը. «Քաղաքը,— գրում է նա,— միաժամանակ բնակեցման կենտրոն է ու աշխատանքային ռեսուրսների թանձրուկ, և՛ արդյունաբերության տեղաբաշխման վայր, և՛ տրանսպորտային ցանցի հանգույց, և՛ շրջակա տարածքի վարչական, տնտեսա-կազմակերպչական, առևտրա-բաշխողական, կուլտուր-կենցաղային կենտրոն»[3]։ Ն. Սիլաևի կարծիքով՝ «միջին քաղաքը դա աշխարհագրական կետ է, որտեղ առկա են օբյեկտիվ պայմաններ նրանում ամենաարդյունավետ արտադրական համալիր, միարնույթ խո-

---

[1] Н. Н. Баранский, Экономическая география. Экономическая картография, М., 1960, стр. 172.

[2] *Նույն տեղում, էջ 175։*

[3] Б. С. Хорев, Пути развития малых и средних городов, М., 1966, стр. 24.

շոր ձեռնարկությունների տեխնոլոգիական ու տնտեսական փոխադարձ կապ ստեղծելու համար։ Միջին մեծության քաղաքը կարող է դառնալ արտադրության համակցման օջախ, տեղական արտադրական փնջի գլխավոր ձեռնարկության խարսխման կենտրոն»[4]։ Շարունակելով իր միտքը, նա գրում է. «սովորաբար նման քաղաքը օժտված է վարչական իրավասություններով, հանդիսանում է մշակույթի և շրջանի համար կադրեր պատրաստելու կենտրոն»[5]։

Վերը նշված բնութագրումները և փաստական նյութերը բերում են այն եզրակացության, որ քաղաքների տարածքային ազդեցության գոտին կախված է դրանց տնտեսական զարգացման մակարդակից, արդյունաբերության կառուցվածքից, ինչպես նաև արտադրական ու ոչ տնտեսական կապերի չափերից և ուժգնությունից։ Սակայն չպետք է մոռանալ և այն, որ մյուս հավասար պայմաններում որքան քաղաքը մարդաշատ է, այնքան լայն է նրա ազդեցությունը։ Քաղաքը սերտ կապի մեջ է գտնվում շրջակայքի հետ և դրանց փոխադարձ կապի լուսաբանումը ունի մեծ նշանակություն ներհանրապետական տնտեսական շրջանացման, շրջանների համալիրային զարգացման և հենց քաղաքների հետագա աճի հեռանկարներն ուրվագծելու համար։ Ըստ Բ. Ալեքսանդրովի՝ «Մեծ և միջին մեծության քաղաքները, իբրև տնտեսական համալիրային նշանակալի կենտրոններ, բազմակողմանի ազդեցություն են թողնում շրջակայքի վրա։ Նրանք դեպի իրենց են ձգում բնակչությանը, հաղորդակցության ճանապարհները, պայմանավորում են արդյունաբերական նոր ձեռնարկությունների ծագումը, ստեղծում են վաճառահանման շուկաներ և հենց դրանցով «ճնշում են գործադրում տնտեսական այնպիսի պրոցեսների վրա, որոնք անմիջական կապ չունեն բուն արտադրության հետ»[6]։

Նշված տնտեսական ազդակների հետևանքով շատ քաղաքներ դառնում են վարչական և տնտեսական-կազմակերպչական կարևոր կենտրոններ։ Այնտեղ կուտակվում են առևտրական, կուլտուր-մշակութային, ուսումնական և բուժական հիմնարկություններ, որոնք սպասարկում են ոչ միայն քաղաքների, այլև ներհանրապետական շրջանի մերձակայքի բնակիչներին։ Միայն որոշ խոշոր քաղաքներ կարող են միաժամանակ կատարել և՛ ներհանրապետական վարչական շրջանների, և՛ միկրոշրջանների կենտրոնի դեր։ Սակայն շրջակայքի տնտեսական շրջանի հետ առավել կամ պակաս սերտ կապեր ունեցող ոչ բոլոր քաղաքները կարող են այդ շրջանի կենտրոնի դեր կատարել։

Այսպես, օրինակ, ներկայումս ՀՍՍՀ տարածքում ներհանրապետական տնտեսական շրջաններ կազմավորող կենտրոններ են Երևանը՝ հանրապետության մայրաքաղաքը և միաժամանակ Արարատյան տնտեսական շրջանի կենտրոնը, Լենինականը՝ Շիրակի տնտեսական շրջանի կենտրոնը, Կիրովականը՝ Լոռու տնտեսական շրջանի կենտրոնը, Հրազդանը՝ Սևանի տնտեսական շրջանի կենտրոնը և Ղափանը՝ Սյունիքի տնտեսական շրջանի կենտրոնը։

Եթե ներհանրապետական առաջին երկու տնտեսական շրջաններն ունեն պարզ արտահայտված շրջան կազմավորող կենտրոններ (Երևան և Լենինական), որոնք իշխող դիրք ունեն տվյալ շրջանների (մոնոկենտրոն շրջաններ)

---

[4] Е. Д. Силаев, Производственно-территориальные комплексы, Баку, 1968, стр. 128—129.

[5] Նույն տեղում էջ 123։

[6] И. Т. Александров, Основы хозяйственного районирования («Вопросы экономического районирования», М., 1957, стр. 213).

սահմաններում գտնվող մյուս բոլոր քաղաքատիպ բնակավայրերի վրա, ապա Լոռու, Սևանի և Սյունիքի ներհանրապետական շրջաններում չկա պարզ արտահայտված շրջան կազմավորող կենտրոն։ Լոռու տնտեսական շրջան կազմավորելու գործում Կիրովականին օգնում են Ալավերդին և Ստեփանավանը, Սևանում՝ Հրազդանին նպաստում են Սևանը և Կամոն, իսկ Սյունիքում՝ Ղափանին օժանդակում են Քաջարանն ու Գորիսը։

Սակայն տնտեսական շրջանում քաղաքի կամ ցանկացած ուրիշ բնակավայրի դերը կարելի է հասկանալ միայն շրջան կազմավորող մյուս բոլոր ազդակները նկատի ունենալով։ Դրանցից են ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերը։

Բնական հարստությունները և առաջին հերթին հանրապետության տնտեսության ճյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները որոշակի ազդեցություն են գործում ՀՍՍՀ ներհանրապետական շրջանների կազմավորման ու հետագա զարգացման վրա։ Ինչպես վերը նշեցինք, քաղաքի տարածքային ազդեցության գոտին բացի ուրիշ ազդակներից կախված է նաև արդյունաբերության կառուցվածքից, այսինքն՝ առանձին ձեռնարկություններից, որոնք տվյալ քաղաքում ներկայացնում են արտադրական տարբեր ճյուղեր։

Քաղաքի տնտեսական ազդեցությունը շրջակայքի վրա կարող է տարածվել կա՛մ շրջակա տարածքի բնակիչների քաղաքի ձեռնարկություններում աշխատելու, կա՛մ էլ շրջակա տարածքում արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծման միջոցով։ Երկրորդ ուղին ավելի նպատակահարմար է, քանի որ հնարավորություն կտա տեղում և՛ օգտագործելու շրջանի աշխատանքային ազատ ռեսուրսները, և՛ կնպաստի արտադրության համաչափ տեղաբաշխմանը։ Դա կնպաստի քաղաքի ու գյուղի էական տարբերությունների վերացմանը, դրականորեն կազդի շրջակա տարածքի բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա, հնարավորություն կտա փոքրացնելու զանազան տրանսպորտային ծախսեր։

Սոցիալիստական հասարակարգի պայմաններում քաղաքը շրջակայքի վրա բարերար ազդեցություն է թողնում բազմաթիվ եղանակներով, որոնց ուսումնասիրությունը պահանջում է մեծ ջանքեր։

РОЛЬ ГОРОДОВ В ДЕЛЕ ФОРМИРОВАНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ РАЙОНОВ

М. Т. АКОПЯН

Резюме

При выделении экономических районов помимо других районообразующих факторов особо важную роль играют крупные и средние города. В советской экономико-географической литературе имеются разные толкования о районообразующей роли городов различного масштаба (крупный, средний, малый). В этой области значительная работа проделана Н. Н. Баранским, Б. С. Харевым, Е. Д. Силаевым и др. авторами.

Зона территориального влияния городов зависит от уровня их экономического развития, структуры промышленности, а также масштабности, интенсивности и устойчивости производственных и внеэкономических связей.

В настоящее время на территории Советской Армении в качестве районообразующих центров внутриреспубликанских экономических районов выступают: Ереван — столица республики и центр Араратского экономического района, Леинакан — центр Ширакского района, Кировакан — центр Лорийского района, Раздан — центр Севанского района и Кафаи —центр Сюникского района.